պնդելու, թէ պառակտման պատճառ են ծառայել այդպիսի վերացական–սկզբունքային խնդիրներ: Ընդհակառակը, բաժանումը առաջ եկաւ շատ աւելի պարզ եւ մարդկային կրքերից ու ցանկութիւններից բխող պատճառներից:

Յետոյ գալիս են օտար աղբիւրները: Ժամանակի կարգով առաջինն է Կապիլլետտին*), որ բաւական մանրամասնօրէն պատմում է վարդապետների մէջ ծագած պառակտումը եւ այն դէպքերը, որոնց հետեւանքով Ասատուր Բարիկն ու Մինաս Գասպարեանը վտարուեցին Վենետիկից ու փոխադրուեցին Տրիէստ: Կապիլլետտին օգտուել է Վենետիկի Հանրապետութեան պետական գաղտնի դիւանից, ինչպէս Սուրբ Ղազարի վանքի դիւանից, ուր պահուած են վաւերագրերի ու հրամանագրերի բնագիրները: Այս երկու դիւաններն էլ պահւում են օրինակելի կանոնաւորութեամբ, մինչդեռ Վենետիկի պատրիարքի գրասենեակի դիւանը զբաղուում է վատ վիճակում, նրա վաւերագրերի մի մասը ծախուել է Վենետիկի մսավաճառներին ու պղտավաճառներին որպէս փաթեթի թուղթ: Հետագայ պատմութիւնը յեղափոխական վարդապետների Տրիէստում հաստատուելու եւ նրանց գործունէութեան առաջին քայլերի մասին, մեծ չափով, մենք գտնում ենք բոլորովին անսպասելի մի աղբիւրից:

ԺԸ. դարու ամենէն հետաքրքրական ու փայլուն դէմքերից մէկը Վենետիկցի Ջիակոմո Կազանովան էր, մի վերին աստիճանի անսկզբունք ու արկածախնդիր մարդ, որ աչքի էր ընկնում նոյնիսկ արկածախնդրութիւններով, պատեհապաշտութեամբ ու բարքերի անկումով այնքան հարուստ այն ժամանակներում:

Կազանովան ծնուել է 1725 թ. սպանական սպեներից ծագող հօրից, որ ընկել էր մինչեւ դերասանութեան աստիճան, եւ Գոլդոնիի թատրոնի դերասանուհի–մօրից դաստիարակուեց իր Վենետիկցի տատի մօտ: Մինչեւ 20 տարեկան հասակը նա, այդ թեթեւամիտ ու զբաղարթ քաղաքում փոխեց մէկից աւելի դրադումներ եւ, ի վերջոյ, դարձաւ ջութակահար մի նուագախմբի մէջ: Մի օր, պարահանդէսից դուրս գալիս, նա ինչ որ մի ծառայութիւն է մատուցանում ծերակուտական Բրիդադէնին, որը նրան առնում է իր տունը, հագցնում, ապրուստ ու սենեակ, սպասաւոր տրամադրում, նաւակ՝ զբօսանքի համար, 10 ոսկի՝ գրպանի ծախս, ու խորհուրդ է տալիս, մտածել սեփական հաճոյքի մասին:

Կազանովան հետեւում է իր բարերարի խորհրդին եւ կեանքի սկզբունք ընդունելով (ande sopere) (խիղախի՛ր գիտենալ) նշանաբանը՝ սկսում է ձգտել՝ ճանաչել ամէն ինչ եւ անել ամէն բան: Եւ շուտով առաջնակարգ դիրք է գրաւում հաճոյքի ու նորաձեւութեան սիրահար այդ քաղաքի աշխարհաքաղաքացիական հասարակութեան մէջ, խաղարանում ու պարասրահում: Ոչնչից ու ոչ ոքից չի ճնշւում եւ դիւրութեամբ վարկարեկում է քաղաքի ամենանշանաւոր կանանց՝ անտես անելով վայելչութեան ամենատարրական կանոնները: Տասնամեայ նման կեանքով նա դառնում է այլեւս անհանդուրժելի եւ անբաղձալի նոյնիսկ Վենետիկի հանրապետութեան մէջ, որ համարւում էր աշխարհիս ամենալայնախոհ երկիրը բարքերի տեսակէտից:

Եւ ահա մի դեղեցիկ առաւօտ, չնայած երեք նշանաւոր ծերակուտականների հովանաւորութեան — Բրիդադէնին միացել էին եւ երկու կու ուրիշ ականաւոր ու հարուստ ծերակուտականներ — նա, «այդ անսպառ վարդապետութիւնների տէր մարդը, որ սովոր էր ապրել ուրիշների հաշուին՝ անձնատուր անառակութեան ու խաղամոլութեան»*), դրուեց Վենետիկի հուշակաւոր (Piombi) (Արճճէ) բանտը հինգ տարի ժամանակով: 15 ամիս մնալով բանտում եւ, տեսնելով, որ ոչ մի յոյս չկայ իր վիճակի բարւոքման, Կազանովան փախուստ է տալիս՝ զարմանալի ճարպիկութեամբ եւ անվեհերութեամբ: Վենետիկի դռները փակուեցին նրա առջեւ, եւ նա սկսեց ճամբորդել Եւրոպայի զանազան կողմերը: Անցաւ Ֆրանսա, Սպանիա,

*) Cappellethi, Storia della Christianismo in Continuzionc a quella dell'abate di Berault -Bercastel, volume IV, Firenze, 1846 p. p. 209-214.

*) Այսպէս էին բնորոշում նրան Ինկուիզիտորները բանտարկութեան հրամանագրի մէջ, 1755 թ. Յուլիս 24–ին: